ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՆՎԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության թանգարանը խբրև նվեր ստացավ Կիլիկիայի հանգուցյալ Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի արխիվից 3 տակյա, 6 արծաթյա և 1 պղնձյա դրամներ։

Ոսկյա դրամներից մեկը կտրված է Մակեդոնիայում (336—318 թ. թ. մեր թվագրությունից առաջ), Ալեքսանդր Մակեդոնացու անունով, մյուսը հռոմեական է և պատկանում է կայսր Վեսպասյանին (69—79 թ. թ. մ. թ.), իսկ երրորդը՝ միջնադարյան մուսուլմանական դինար է՝ կտրված Խորասանի նշանավոր քաղաքում Մազանդարանի շահ Ռուստամ Իբն-Ալիի կողմից, հավանաբար հիջրայի 551—552 թ. թ., որը համապատասխանում է մեր թվականության 1157—1158 թվականներին։

Պետք է նշել, որ Մազանդարանի շահերից, ընդհանրապես, մեզ հասած դրամները խիստ հազվադեպ են, իսկ վերոհիշյալ դինարը գոյություն ունեցող հատ ու կենտ օրինակների շարքում մի բոլորովին նոր տեսակի է։

Արծաթ դրամներից մեկը պատկանում է Հռոմի կայսր Մարկոս Ավրելիոս Անտոնինոսին և կրում է իր վրա նրա «Արմենիկոս» մականունը (161—189 թ. թ.)։ Մնացած արծաթ դրամներից չորսը պատկանում են Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն երկրորդին (1198—1219 թ. թ.), ըստ որում, դրանցից մեկը խիստ հազվագյուտ է։

Ուշագրավ է նաև Տրապիզոնի կայսր Ալեքսիոս երկրորդի (1297—1330 թ. թ.) արծաթյա դրամը, որպես եզակի օրինակ մինչև այժմ մեզ հասած նրա դրամների մեջ։

Պղնձյա դրամը բյուզանդական է, դրժբախտաբար մաշված, և վերաբերում է մեր թվականության 7-րդ դարի առաջին կեսին. հավանաբար այն պատկանում է Հերակլիոս կայսեր և նրա որդի Հերակլիոս Կոստանդինի իշխանության տարիներին։

Վերոհիշյալ դրամների մեծ մասը պահպանված է շատ լավ վիճակում։

Հազվագյուտ դրամների այս փոքր հավաքածուն նշանակալից ավանդ է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության թանգարանի դրամագիտական ժողովածուի համար, ուր այդ դրամներից մի քանիսը բացակայում էին։